# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2012թվականի N 298-Ա

## ԳԵՆՅԱ ՍԱՐԳՍԻ ԽՈՋՈՅԱՆԻՆ ԻՐ ԹՈՌԱՆ՝ ԱՆՈՒՇ ԲԱԳՐԱՏԻ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարին է դիմել Դիլիջան քաղաքի Շամախյան փողոցի 2ա շենքի թիվ 18 բնակարանի բնակչուհի Գենյա Սարգսի Խոջոյանը, 1996թ. հունիսի 01-ին ծնված Անուշ Բագրատի Թամրազյանի նկատմամբ հոգաբարձու նշանակելու խնդրանքով:
Ուսումնասիրությունից պարզվել է, որ Անուշ Բագրատի Թամրազյանի ծնողները շուրջ տասներեք տարի գտնվում են Ռուսաստանի Դաշնությունում և երեխայի խնամքն արողջովին իրականացնում է իր հարազատ տատը՝ Գենյա Սարգսի Խոջոյանը:
Հաշվի առնելով, որ Գենյա Սարգսի Խոջոյանը չափահաս գործունակ է, ծնողական իրավունքներից զրկված չէ, բարոյական և անձնական այլ հատկանիշները բնութագրվում են դրական, հանդիսանում է Անուշ Բագրատի Թամրազյանի հարազատ տատը, իսկ անչափահասը խնամքի կարիք ունի՝ Դիլիջան համայքի խնամակալության հոգաբարձության հանձնաժողովը Գենյա Սարգսի Խոջոյանին հոգաբարձու նշանակելու հարցով 2012թ. օգոստոսի 02-ի թիվ 4 արձանագրությամբ տվել է իր դրական եզրակացությունը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 33, 35, 36, 37 հոդվածների, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 134, 135 հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 2.1 կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջան քաղաքի Շամախյան փողոցի 2ա շենքի թիվ 18 բնակարանի բնակչուհի Գենյա Սարգսի Խոջոյանին նշանակել իր թոռան՝ 1996թ. հունիսի 01-ին ծնված Անուշ Բագրատի Թամրազյանի նկատմամբ հոգաբարձու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 02
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 օգոստոսի 2012թվականի N 299-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՋԻՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 940.0ՔՄ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՔԱՂ. ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Արթուր Սարգսյանը, Դիլիջանի Առաջին փողոցի վերջնամասի գյուղատնտեսական նշանակության հողերից 940.0քմ հողամասը որպես արոտավայր օգտագործելու իրավունք ստանալու խնդրանքով:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Առաջին փողոցի վերջնամասի 940.0քմ մակերեսով արոտավայրից 3 տարի ժամկետով օգտվելու իրավունք տրամադրել քաղ. Արթուր Սարգսյանին /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
2. Արոտավայրից օգտվելու տարեկան վճարի չափը սահմանել 3000 դրամ:
3. Քաղաքացու հետ կնքել արոտավայրից օգտվելու պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 02
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2012թվականի N 300-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 76 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 45.0ՔՄ /ՄԻՆՉԵՎ 20%/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳՐԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՍԱՆՆԱ ԳՎՈԶԴԵՆԿՈՅԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. ապրիլի 11-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Գայի փողոցի թիվ 76 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Գրետա Պարույրի Մանուկյանը և Սուսաննա Ցոլակի Գվոզդենկոն: Վերջիններս դիմել են Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի օրինական սահմանների ճշտման խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, Գայի փողոցի թիվ 76 հասցեի տնամերձ հողամասի օրինական չափը կազմում է 608.0քմ: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվում է 45.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացիների սեփականության իրավունքը (608.0քմ X մինչև 20%) /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջան համայնքում իրականացվող առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Գայի փողոցի թիվ 76 հասցեի տնամերձ հողամասին կից փաստացի ավել օգտագործվող 45.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղաքացիներ Գրետա Մանուկյանի և Սուսաննա Գվոզդենկոյի սեփականության իրավունքը: Այսպիսով, Գայի փողոցի թիվ 76 հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 653.0քմ /608.0քմ+45.0քմ/մինչև 20%/:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները և օժանդակ շինությունը համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել համասեփականատերերին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 02
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2012թվականի N 301-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲ. ԹԻՎ 36 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, գրանցված Դիլիջանի նոտարական գրասենյակի 2012թ. հուլիսի 31-ին թիվ 1274 սեղանամատյանում, Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց 1-ին նրբ. թիվ 36 հասցեի տնատիրության ժառանգ է հանդիսանում քաղ. Տատյանա Բորիսովան: Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Տատյանա Բորիսովան՝ Կալինինի փողոց 1-ին նրբ. թիվ 36 հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով: Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 348.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 533.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Տատյանա Բորիսովան ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 233.0քմ հողամասը, ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Կալինինի փողոց 1-ին նրբ. թիվ 36 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 648.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Կալինինի փողոց 1-ին նրբ. թիվ 36 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 648.0քմ մակերեսով, քաղ. Տատյանա Վասիլևնա Բորիսովայի /ծնված՝ 08.01.1958թ./ սեփականության իրավունքով:
2. Կալինինի փողոց 1-ին նրբ. թիվ 36 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել

oգտագործվող 233.0քմ հողամասը օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի քաղաքային համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում:
3. Պարտավորեցնել քաղ. Տատյանա Բորիսովային.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 03
ք.Դիլիջան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2012թվականի N 302-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 83 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. հուլիսի 4-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 83 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Գրիշա Ժորայի Ամյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին նշված հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասը բաղկացած է թվով երկու գույքային միավորներից, որոնց ընդհանուր մակերեսի օրինական չափը կազմում է 600.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասերի ընդհանուր մակերեսի փաստացի չափը կազմում է 900.0քմ՝ 370.0քմ և 530.0քմ մակերեսներով: Վերջինիս կազմում փաստացի ավել օգտագործվում է 300.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Գրիշա Ամյանը ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Մյասնիկյան փողոցի թիվ 83 հասցեի տնամերձ հողամասի ընդհանուր մակերեսի չափը կազմում է 900.0քմ /370.0քմ և 530.0քմ/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 83 հասցեի բնակելի տան 900.0քմ ընդհանուր մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման փաստաթղթային

հիմքերը՝370.0քմ և 530.0քմ մակերեսներով, քաղ. Գրիշա Ժորայի Ամյանի /ծնված՝ 23.02.1948թ./ սեփականության իրավունքով:

2. Քաղ. Գրիշա Ամյանին պատկանող 370.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մյասնիկյան փողոց թիվ 83/2, 530.0քմ հողամասը թողնել նախկին՝ Մյասնիկյան փողոց թիվ 83 հասցեով:

3. Պարտավորեցնել քաղ. Գրիշա Ամյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 03

ք.Դիլիջան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2012թվականի N 303-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 327-017 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 327-017 ծածկագրով հողամասի մի մասի՝ 150.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում, մասնավորապես բնակելի կառուցապատման /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 327-017 ծածկագրով հողամասի մի մասին՝ 150.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Կամո փողոց թիվ 4/2:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 327-017 ծածկագրով հողամասի մի մասի՝ 150.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 03
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 օգոստոսի 2012թվականի N 304-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 44/2 ՀԱՍՑԵԻ 33.1ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի տվյալների համաձայն՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2754670, տրված 12.10.2009թ., Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 44 հասցեի բնակելի տունը 175.0քմ տնամերձ հողամասով պատկանում է քաղ. Վոլոդյա Սահակի Խաչատրյանին: Վերջինս դիմել է քաղաքապետարան՝ նշված բնակելի տան տնամերձ հողամասին կից, Օրջոնիկիձե փողոցի թիվ 44/2 հասցեի 33.1քմ հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը, այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, նշված բնակելի տան սեփականատեր Վոլոդյա Խաչատրյանին: Վերոգրյալ 33.1քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում: Նշված 33.1քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված է և տրված է սեփականության վկայական թիվ 21072012-11-0059: Համայնքի ավագանին 2012թ. հուլիսի 27-ի թիվ 139 որոշմամբ համաձայնություն է տվել նշված 33.1քմ հողամասն ընդլայնման կարգով քաղ. Վոլոդյա Խաչատրյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշման 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 44 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասին կից գտնվող, Օրջոնիկիձե փողոցի թիվ 44/2 հասցեի 33.1քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով /ընդլայնման կարգով/ օտարել քաղ. Վոլոդյա Խաչատրյանին: Հողամասի արժեքը կազմում է

41110 դրամ:
2. Քաղաքացու հետ կնքել հողի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Վոլոդյա Խաչատրյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողամասի կադաստրային արժեքը՝ 41110 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 03
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 օգոստոսի 2012թվականի N 305-Ա

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Էդգար Տիգրանի Հարությունյանը, իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2012թ. հուլիսի 27-ի նիստում և թիվ 138-Ա որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձե 65շենքի թիվ 29, երեք սենյականոց՝ 77.16ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով,115740 (հարյութ տասնհինգ հազար յոթ հարյուր քառասուն) դրամ արժեքով, օտարել Էդգար Տիգրանի Հարությունյանին, կնոջը՝ Սեդա Հրանտի Մարտիրոսյանին, երկու տղաներին՝ Տիգրան և Աշոտ Էդգարի Հարությունյաններին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 06
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2012թվականի N 306-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 11-003-0673-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-003-0673-0001 ծածկագրով 1548.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 11-003-0673-0001 ծածկագրով, 1548.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Պարզ լճի փողոց թիվ 69/1:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 11-003-0673-0001 ծածկագրով 1548.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 06
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2012թվականի N 307-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 11-003-0107-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-003-0107-0001 ծածկագրով 80.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 11-003-0107-0001 ծածկագրով, 80.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կալինինի փողոց թիվ 287/1:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 11-003-0107-0001 ծածկագրով 80.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 06
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2012թվականի N 308-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 11-003-0687-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-003-0687-0001 ծածկագրով 1000.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 11-003-0687-0001 ծածկագրով, 1000.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Թբիլիսյան խճուղի թիվ 54/2:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 11-003-0687-0001 ծածկագրով 1000.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 06
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2012թվականի N 309-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 7248.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 496.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 7248.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի և 496.0քմ հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու վերաբերյալ՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Կից աղյուսակում ներկայացված Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 7248.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի և 496.0քմ հողամասը կրկնաճուրդի միջոցով օտարելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 06
ք.Դիլիջան

Առդիր Հավելված.
ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու 2012թ. օգոստոսի 6-ի
թիվ 309-Ա որոշման

| Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի աճուրդ-վաճառք | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
| 1 | Լոտ 22/ՔՀ-12/ | Տ.Պետրոսյան 1-ին նրբ. 1/1 | 11-003-0040-0276 | 7,000.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | անհատական բնակելի տան կառուցման | 17,500,000 | չկան |
| 2 | Լոտ 23/ՔՀ-12/ | Մոլդովական 51 | 11-003-0075-0102 | 130.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | առևտրի սրահի կառուցման | 325,000 | չկան |
| 3 | Լոտ 24/ՔՀ-12/ | Գայի 76/3 | 11-003-0247-0003 | 54.0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | ավտոտնակի կառուցման | 135,000 | չկան |
| 4 | Լոտ 25/ՔՀ-12/ | Շահումյան 5/3 | 11-003-0223-0096 | 64.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | առևտրի սրահի կառուցման | 160,000 | չկան |
| 5 | Լոտ 167/ՔՀ-10/ կրկնաճուրդ | Սարալանջի 3 | 11-003-053-330 | 496.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | անհատական բնակելի տան կառուցման | 1,240,000 | չկան |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2012թվականի N 310-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 1290.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1290.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու վերաբերյալ՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, մակերեսով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Կից աղյուսակում ներկայացված Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 1290.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 06
ք.Դիլիջան

Առյուսակ.

Դիլիջանի համայնքի դեկտեմբերի 2012թ. օգոստոսի 6
թիվ 310-Ա որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին /դրամ/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 7/ՔԿ-12/ | Թբիլիսյան խճուղի 54/1 | 11-003-0687-0002 | 1,290.0 | Բնակավայրերի հող | Այլ հողեր | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 30 տարի | 64,500 | չկան |

*Դիլիջանի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2012թվականի N 311-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի «ՄԻ ՇԱՐՔ ԿՈՄՈՒՆԱԼ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Դիլիջան քաղաքի Կալինինի փող. 177 շենքի թիվ 15 բնակարանի բնակչուհի Մարիամ Մելքումյանը՝ հայտնելով, որ Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 26-ի թիվ 24 որոշման մեջ սխալ է տեղի ունեցել. «Մարիամ Թադևոսի Մելքումյանի» փոխարեն գրվել է «Մարիամ Թադևոսի Մելքոնյան»: Քաղաքացին խնդրել է կատարել համապատասխան ուղղում:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 26-ի «Մի շարք կոմունալ բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 24 որոշման մեջ վերոհիշյալ ազգանունը թյուրիմացաբար սխալ է գրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի փետրվարի 26-ի «Մի շարք կոմունալ բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 24 որոշման 25-րդ կետում կատարել փոփոխություն՝ «Մարիամ Թադևոսի Մելքոնյանի» փոխարեն գրել «Մարիամ Թադևոսի Մելքումյան»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 08
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 օգոստոսի 2012թվականի N 312-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՔԱՂ. ՋԻՎԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 12 հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 11-003-0134-0003 ծածկագրով հողում քաղ. Ջիվան Մխիթարյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն մասնավորապես՝ 42.3քմ մակերեսով ավտոտնակ /հաշվարկված է արտաքին չափերով/ 42.3քմ ինքնակամ զբաղեցրած հողամասով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Ջիվան Թարխանի Մխիթարյանի կողմից ինքնակամ կառուցված շինությանը և 42.3քմ ինքնակամ զբաղեցրած հողամասին տալ նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 12/14:
2. Գետափնյա փողոց թիվ 12/14 հասցեի ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումը՝ կից հատակագծով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, նշված անշարժ գույքի նկատմամբ Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 10
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2012թվականի N 313-Ա

## «ԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012 հուլիսի 14-ի թիվ 269-Ա որոշմամբ, 2012թ. օգոստոսի 14 – ին աճուրդ-վաճառքի էր ներկայացվել Դիլիջան քաղաքի Մոլոդյոժնայա փողոց թիվ 7/2 հասցեում գտնվող 10116.0քմ սպասարկման հողամասով կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքը / ԼՈՏ 1 (ԱԳ - 12) /, 30540000 դրամ մեկնարկային գնով, որը հաշվարկված է 5250000 դրամ ՝ շինության համար և 25290000 դրամ՝ հողամասի համար: Կայացած աճուրդում 36648000 դրամ առավելագույն գնով հաղթեց «Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա» հիմնադրամը, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արա Սերգոյի Նազինյանի, որի մասին կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջան քաղաքի Մոլոդյոժնայա փողոց թիվ 7/2 հասցեում գտնվող 10116.0քմ սպասարկման հողամասով կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքը 36648000 դրամով վաճառել «Ազգային սոցիալական բնակարանային ասոցիացիա» հիմնադրամին, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Արա Սերգոյի Նազինյանի:
2. Կնքել անշարժ գույքի առքուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել կազմակերպությանը.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051450 հաշվարկային հաշվին մուծել աճուրդի սակարկությունների արդյունքում ձևավորված առավելագույն գինը, այն է՝ 6300000 դրամ, իսկ Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել30348000 դրամ, ընդ որում աճուրդի անցկացման օրը մուծված 1527000 դրամ /262500 դրամ և 1264500 դրամ/ նախավճարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Տեղական տուրքերի, վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28 – ի թիվ 208 - Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 15
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2012թվականի N 314-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱՄԱՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 51 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին են դիմել քաղ. Նատալյա Կարապետյանը և Ներսես Կարապետյանը՝ Դիլիջանի Կամարինի փողոցի թիվ 51 հասցեի տնամերձ հողամասի և բնակելի տան՝ իրենց համատեղ սեփականությունը հանդիսացող մասին /համաձայն կից ներկայացված առանձնացման սխեմայի/ նոր հասցե տրամադրելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ համաձայն ընդհանուր համատեղ սեփականության տակ գտնվող գույքը բաժանելու վերաբերյալ պայմանագրի՝ Դիլիջանի Կամարինի փողոցի թիվ 51 հասցեի բնակելի տունը և 1740.0քմ տնամերձ հողամասը բաժանվել է որպես երկու առանձին գույքային միավորների:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացիներ Նատալյան Կարապետյանի և Ներսես Կարապետյանի համատեղ սեփականությունը հանդիսացող, Կամարինի փողոցի թիվ 51 հասցեի բնակելի տան մի մասին և 835.0քմ հողամասին /համաձայն կից ներկայացված առանձնացման սխեմայի/ տրամադրել նոր հասցե՝ Կամարինի փողոց թիվ 51/1:
2. Պարտավորեցնել Նատալյա Կարապետյանին և Ներսես Կարապետյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 15
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2012թվականի N 315-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՊԱՐԶ ԼՃԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵԻ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԹՎՈՎ 10 ՔՈԹԵՋՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Կարապետ Առաքելյանը՝ Դիլիջանի Պարզ լճի փողոց թիվ 20 հասցեի հանգստյան համալիրի թվով 10 քոթեջներին /համաձայն կից ներկայացված առանձնացման սխեմայի/ նոր հասցե տրամադրելու խնդրանքով:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Պարզ լճի փողոց թիվ 20 հասցեի հանգստյան համալիրի հողամասի բաժանման սխեմայում նշված թիվ 5 քոթեջին տրամադրել նոր հասցե՝ Պարզ լճի փողոց թիվ 20/5,
թիվ 6 քոթեջին՝ Պարզ լճի փողոց թիվ 20/6,
թիվ 8 քոթեջին՝ Պարզ լճի փողոց թիվ 20/8,
թիվ 9 քոթեջին՝ Պարզ լճի փողոց թիվ 20/9,
թիվ 10 քոթեջին՝ Պարզ լճի փողոց թիվ 20/10,
թիվ 11 քոթեջին՝ Պարզ լճի փողոց թիվ 20/11,
թիվ 12 քոթեջին՝ Պարզ լճի փողոց թիվ 20/12,
թիվ 13 քոթեջին՝ Պարզ լճի փողոց թիվ 20/13,
թիվ 14 քոթեջին՝ Պարզ լճի փողոց թիվ 20/14,
թիվ 15 քոթեջին՝ պարզ լճի փողոց թիվ 20/15:
2. Պարտավորեցնել Կարապետ Առաքելյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 15
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2012թվականի N 316-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 17 Ա ՀԱՍՑԵԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Եղիշե Հարությունյանը՝ Դիլիջանի Շահումյան փողոց թիվ 17 ա հասցեի արտադրական ջրերի մաքրման կայանին և 2150.0քմ սպասարկման հողամասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Եղիշե Հարությունյանին պատկանող Շահումյան փողոց թիվ 17 ա հասցեի արտադրական ջրերի մաքրման կայանին և 2150.0քմ սպասարկման հողամասին տրամադրել նոր հասցե՝ Շահումյան փողոց թիվ 17/7:
2. Պարտավորեցնել Եղիշե Հարությունյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 15
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2012թվականի N 317-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 11-003-0040-0106 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-003-0040-0106 ծածկագրով 624.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 11-003-0040-0106 ծածկագրով, 624.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Տ.Պետրոսյան փողոց 3-րդ նրբ. թիվ 22:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 11-003-0040-0106 ծածկագրով 624.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 15
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2012թվականի N 318-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 11-003-0040-0106 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-003-0040-0106 ծածկագրով 750.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 11-003-0040-0106 ծածկագրով, 750.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Տ.Պետրոսյան փողոց 3-րդ նրբ. թիվ 24:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 11-003-0040-0106 ծածկագրով 750.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 15
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2012թվականի N 319-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 11-003-0040-0106 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 11-003-0040-0106 ծածկագրով 550.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 11-003-0040-0106 ծածկագրով, 550.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Տ.Պետրոսյան փողոց 3-րդ փակուղի թիվ 9:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 11-003-0040-0106 ծածկագրով 550.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. օգոստոսի 15
ք.Դիլիջան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2012թվականի N 320-Ա

## ՔԱՂ. ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. հուլիսի 11-ի թիվ 257-Ա որոշմամբ, 2012թ. օգոստոսի 13-ին վարձակալության իրավունքի մրցույթի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 1741.0քմ հողամաս /ԼՈՏ-1(Վ-12), Պարզ լճի փողոց թիվ 69 /, 30 տարի ժամկետով, բարեկարգման նպատակով, 43525 դրամ տարեկան վարձավճարի մեկնարկային գնով:
Կայացած մրցույթում 52230 դրամ առավելագույն գնով հաղթեց Դիլիջանի Կալինինի փողոց շ. 185, բն. 5 հասցեի բնակիչ Սուրեն Սարգսյանը, որի մասին մրցութային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը գտնվում է բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ այլ հողեր, համաձայն Դիլիջան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծի:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76, 78, 80, 81 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 1741.0քմ /Պարզ լճի փողոց թիվ 69 / հողամասը, բարեկարգման նպատակով, 30 տարի ժամկետով, վարձակալության իրավունքով տրամադրել Դիլիջանի Կալինինի փողոց շ. 185, բն. 5 հասցեի բնակիչ Սուրեն Սարգսյանին: Հողամասի տարեկան վարձավճար սահմանել մրցույթում առաջարկված առավելագույն գինը, այն է՝ 52230 դրամ:
